ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՋԻՎԱՆ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ

(Ջիվան Արիստակեսյանի «Այրվող հորիզոններով քայլողը»
(Երևան 2008) գրքի առթիվ)

Ջիվան Արիստակեսյանը (1906-1996) այն հայորդիներից է, որի արգասավոր կյանքը՝ մաքառումների բովով անցած վկայությունն է հայոց նորագույն պատմության գրեթե բոլոր այն անագորույն տարիների, որոնք ապրել են մի քանի եղերաբախտ սերունդներ: Վեպը, փաստորեն, նաև մի ողջ սերնդի պատմություն է, սերունդ, որը մաքառեց՝ տեսնելով գաղթ, ցեղասպանություն, աքսոր, երկու մեծ աշխարհամարտ, գերություն, ներգաղթ, վերածնված հայրենիք և, ի վերջո, անկախ պետականություն: Այս ամենի բովով («և այդ դժոխքում էլ տեղ չկար…») անցած սերունդը ոչ միայն ուներ վերապրելու, այլև վերընձյուղվելու իրավունք, Հայոց Տունը, որ միշտ մեծ ու հյուրընկալ է եղել, շենացնելու խորին գիտակցում և իրավունք: Եվ մաքառումն էր միայն գերադաս համարվում նրանց կողմից, ովքեր ունեին վերին, աստվածաընծա հավատ՝ հուսալով այն օրվան, որ մի օր բացվելու էր հայոց հողում՝ վեհացնելով հայ մարդու հոգին: Մինչ այս ամենը սերունդը իր բախտաբաժին կյանքն էր ապրում, իսկ Ջիվան Արիստակեսյանը իր ապրածը պետք է գրառեր՝ վերստին վերապրելով դաժան անցյալի իրողությունները մանրամասնաբար: Եվ արդյոք իր համար մի տեսակ սխրալից չէ՞ր հիշողություններով ապրելը. «Մի օր պետք է հիշեի՞, թե՞ չէ… Պիտի հիշեի՞, թե որտեղ եմ ծնվել, ինչո՞ւ հենց այնտեղ, ինչո՞ւ էլ այնտեղ չեմ… Ուզում էի մոռանալ, շատ էի ուզում մոռանալ կրունկներս այրող հորիզոնների մասին, քանզի ապրելուն, ժպտալուն, երգելուն խանգարում էին… Բայց մի օր պիտի հիշեի՞, թե՞ չէ… Պիտի հիշեի, թեև երբեք չէի մոռացել… Պետք է հիշեի հենց այսպես՝ թղթի վրա բոցեղեն օրերս դաջելով»:

Հիշողությունները «խոսում են»՝ ցուցանելով այն ճանապարհները, որոնցով անցել էին ինքը, իր սերնդակիցները, մտերիմները, հարազատները: Նրանք նույնպես այդ ճանապարհը անցել են մահվան և սարսափի միջով: Խիստ հավաստի են այդ հիշողությունները, պատմական անճշտություններից զերծ: Ամեն ժամանակաշրջան, քաղաքական իրադարձություն գրեթե պատմաբանի բծախնդրությամբ է ներկայացված, միայն ոչ փաստական խճուղումներով, այլ երևույթների խորքը թափանցող, դրանց պատճառահետևանքային կապերի ճշմարտալից բացահայտումներով ու մեկնաբանություններով: Մանավանդ, որ օրագրությունը իրապես ունի վիպական կառույց՝ իրադարձությունների տրամաբանական զարգացման առումով և նշանակությամբ: Այստեղ պետք է արժանին հատուցել վեպի գրական խմբագիր Գևորգ Գիլանցին՝ ցուցաբերած պատշաճ ու արդարացված բծախնդրության համար՝ վեպի լեզուն, կերպարների երկխոսությունները, նկարագրական-պատմողական հատվածները հնարավորինս անխաթար պահպանելու առումով:

Ընդհանրապես, «Այրվող հորիզոններով քայլողը» վեպ-օրագրության առանցքը կազմող հայոց վերջին տասնամյակների տարեգրությունը այնքան և անչափ հուզիչ չէր

թվա, առավել ևս ընթերցողներին (ինչի համար վստահ ենք) խորհրդակցությունների չէր մղի, եթե վիպական իրադարձությունների բովում ընդգրկված չլինեին մեր ժողովրդի համար չափազանց կենսական նշանակություն ունեցող տարեշրջաններ: Մինչեղեռնյա արևմտահայոց կյանք և կենցաղավարություն, Մեծ եղեռն (իր իրական, անպատկերելի նկարագրով), որբանոցային միջավայր, բռնի տեղահանում (Հունաստան և այլ երկրներ), զանգվածային ներգաղթ, Երկրորդ աշխարհամարտ, գերության տարիներ և, ի վերջո, վերադարձ այնքան երազած Հայաստան: Մնացյալ տարիները Ջ. Արիստակեսյանի համար եղել են ապրածը վերապրելու, գրառելու դժվարին, բայց պատասխանատվությամբ լեցուն բուռն, ինքնամոռացության տարիներ, որոնք այսօր լիովին արդարացված են այս վեպի առկայությամբ:

Վեպ-օրագրության մեջ պատմական դեպքերն ու ժամանակաշրջանը արտացոլվում են, իրավ, պատմական դեմքերի միջոցով: Որբանոցը պատկերող հատվածներում Ջ. Արիստակեսյանը անդրադառնում է Հայ Եկեղեցվո նվիրյալներից Գարեգին վարդապետին, որը Տրապիզոնի որբանոցի Սահակ-Մեսրոպյան դպրոցի առաջնորդն էր, հետագայում Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք, նրա անմնացորդ նվիրումին, որն արտահայտվում է որբերի նկատմամբ տածած հայրական սիրով: Ուշագրավ է նաև այս դժվարին պայմաններում Գարեգին վարդապետի ծավալած գործունեությունը. «Տրապիզոնի հայությունը ուներ նյութական օժանդակություն՝ ցուցաբերելու մեծ հնարավորություններ: Դրանք բազմազան էին: Հիշատակեմ միայն մեկը՝ Վանքը: Վանքը Տրապիզոնի շրջակայքի ամենանշանավոր պտղառատ վայրն էր, որը վարդապետը միջազգային իրավական նորմերը կիրառելու միջոցով կարողացել էր վերցնել այն բարբարոս ավարառուներից՝ թուրք իշխանություններից: «Սուրբ Խաչը մեծ վանական համալիր էր, պատմական հուշարձան: Ընդարձակ, բերքառատ կալվածքներ ուներ: Ո՞ւր էին նրա վանականները, բնակիչները…»:

Այնուամենայնիվ, որբերին փրկելու խնդիրը ավելի քան առաջնային էր, եթե ոչ ամենաէականը: «Հայու բեկորներու» փրկելու գիտակցմամբ Գարեգին եպիսկոպոսը (ձեռնադրվել էր Էջմիածնում այս իրադարձությունների ընթացքում, Ա. Ա.) մի քանի օր ժամանակ էր խնդրում, որ կարողանան եվրոպական կամ ամերիկյան նավ գտել և հեռանալ Թուրքիայից: Ապաստան չկար ոչ մի երկրում, բացի Հունաստանից, որտեղ կատարյալ քաոս էր: Ի՞նչ պայմաններով, չգիտեմ, բայց ճարվեց իտալական մեծ նավը: Առաջնորդի գլխավոր հոգսն այժմ որբանոցի արխիվը փրկելն էր: Կարողացավ կապուկների տեսքով հավաքել, խնամքով տեղավորել սնդուկներում ու հասցնել նավահանգիստ, բայց դուրս հանելու հավանականությունները չնչին էին…»:

Պատմական այս ուշագրավ փաստը մի շարք ուսումնասիրողների կողմից քննության չի ենթարկվել, բայց ոչ ոք ստույգ չի նշել, թե արխիվը բարեհաջող Հունաստան հասե՞լ է արդյոք: Մանավանդ. «…թույլատվության վերջնական պայմաններն էին, նախ՝ նյութական ոչ մի արժեքի փոխադրում չի կարելի, երկրորդ՝ խիստ անհատական խուզարկություն և երրորդ՝ չպիտի լիներ ոչ մի կողմանի անձնավորություն, միայն ստուգված, թույլատրած ցուցակով էին բաց թողնելու: Ոչ մի գույք, գործիք և այլն»:

Այսպիսով, այս անագորույն պայմաններից ազատվելով և հայտնվելով Հունաստանում՝ «որբական կյանքի նոր զարթոնք է» ավետում Ջ. Արիստակեսյանը: Ընդհանրապես, օրագրողի նրա հայացքը ոչ միայն իրականության ճշգրիտ պատկերմանն է «նվի-

բագործված», այլև այդ իրականության շերտերում հայության անողոք կյանքի պատճառահետևանքային կապի իրողությունների հայտնաբերումն է խնդրո առարկա վեպ-օրագրության գրեթե բոլոր պատումներում: Այս իսկ պատճառով շարունակական բնույթ կրող օրագրողի մտածումներում միշտ առկա է կորուսյալ հայրենի եզերքի ընդհանրացյալ հոգեբանական նկարագիրը: Մի հանգամանք, որ ավելի քան դրսևորվում է Հունաստանում անցկացրած օրերին. վերապրումներն այստեղ ավելի ցայտուն էին, քանզի վերապրողները որբեր էին. բնօրրան, հարազատներ կորցրած անապագա մի սերունդ, որոնք դեռ չէին դադարել ընդվզման պահեր ապրելուց. «Ամբողջ ուժով բղավում էինք՝ «մահ թուրքիզմին», «Դեպի Իզմիր», «Դեպի Կիլիկիա»…»:

Միջանկյալ ուզում ենք անդրադառնալ վեպ-օրագրության գեղարվեստականության, գուցեն գեղարվեստորեն շարադրումին, այն, ինչ կարևորվում է ցանկացած հուշագրության պարագային, որովհետև հուշագրականությունը ենթադրում է պատմողի, հուշագրողի գրողական կեցվածք: Արդյոք իրականությունը, Ջ. Արիստակեսյանի պարագային իրականության տարբեր ժամանակահատվածները, իր բազմաշերտությամբ, մարդկային-հոգեբանական նկարագիրներով ինչպե՞ս, ի՞նչ կողմերով է բացահայտվել: Լեզվառճական ի՞նչ առանձնահատկություններով է հուշագրողը կարողացել կերպարներին վերապրեցնել:

Ջիվան Արիստակեսյանի լեզուն, ոճը, հուշագրությունում առկա ամենատարբեր տեսարանների պատկերումները, կերպարների՝ միմյանց հետ հաղորդակցումը, այս ամենը արդյոք բնակա՞ն են, հավաստիություն ներշնչո՞ւմ են, արտացոլո՞ւմ են ժամանակը (ժամանակները), իրադարձությունների հաջորդականությունը կատարվո՞ւմ է սահուն, անբռնազբոս, կա՞ն ավելորդ պայմանականություններ, նկարագրական-վերապատմողական հատվածներ, որոնք դուրս են մնում, չեն ձուլվում վեպ-հուշագրության ընդհանուր պատումին:

Այս ամենը մեր կողմից դիտարկվել է և չի նկատվել հակադրելի, իրարամերժ, հեղինակի պատմելակերպի և վիպական-նկարագրականության միջև հակասություններ: Եվ որ ամենաէականն է, իսպառ բացակայում են ոչ միայն լեզվական խճողումներ, այլև հնաբանություններ, մի հանգամանք, որ նմանաբնույթ ստեղծագործությունների պարագային, մանավանդ, երբ վավերագրողը գրողական ճանապարհ չի անցել, գրեթե անխուսափելի է:

Որբանոցին հաջորդած հետագա պատումներում (ներգաղթ՝ Հայաստան, Երկրորդ աշխարհամարտ, գերության տարիներ, վերստին վերադարձ Հայաստան), Ջ. Արիստակեսյանը ընդհանրապես չի ձերբազատվում անցյալի սահմռկելի հիշողություններով ապրելուց: Ցեղասպանություն տեսած և բնավեր դարձած հայ մարդու նրա էությունը հիշողությունների իր խունկն է խնկարկում նահատակաց սուրբ շիրիմների առջև: Ջարկերակի պես են տրոփում նրա հուշերը, բայց ապրելու, կյանքը նորովի վերահիմաստավորելու մղումը, արդեն Հայրենիքի շենացնող շնչառության ներքո, նրան հանգիստ չի տալիս. «Հինգ արու զավակներ ունեցա ու մեծացրի: Սա է ժողովրդիս, ազգիս գոյատևման ճանապարհը: «Ցեղին սիրտ»՝ սա դուրս է եկել Վարուժանի գրչի տակից: «Ցեղս» պիտի շատանա, որ մենք հաղթենք…»:

Այս ըմբռնումը չափազանց գիտակցված ու խորապես ապրված է եղել Ջիվան Արիստակեսյան հայորդու կողմից իր կյանքի ողջ ընթացքում: Կյանք, որ հայության անցած ճանապարհ է հիշեցնում ամենայն առումով: Կյանք, որը արմատից հիմնազուրկ է եղել,

բայց հետագայում մաքառման շնորհիվ վերաիմաստավորվել է՝ ապագայի նվիրականությամբ, հավատով: Եվ այս ամբողջ ժամանակաընթացքում, իր տեսածն ու ապրածը սերունդներին փոխանցելու մղումով, որպես օրագրող, Ջ. Արիստակեսյանը արթնորեն մաքառել է՝ վկայելու համար, որ սերունդները վերապրում են, որպեսզի պատմությունը, իսկ հայոց պատմությունը առավել ևս, անխաթար, և պատմության դասերը ավելի ու ավելի ճշմարտորոշորեն փոխանցվեն գալոց, այն սերունդներին, որոնք Աստծո կամոք չեն տեսել Ցեղասպանություն և չեն կորցրել Երկիր դրախտավայր:

Ջիվան Արիստակեսյանի «Այրվող հորիզոններով քայլողը» վեպ-օրագրությունը լինելով ինքնապատում, իր բոլոր արժանիքներով նախ և առաջ հոգևոր ոլորտում ստեղծված, հայ մարդկանց և հայ կյանքի մասին գրված ուշագրավ ՏԱՐԱԲՆՈՒՅԹ խորհրդածությունների մղող, մեր անցյալի ամենադրամատիկ դրվագները մեզ ներկայացնող գիրք է, և ի վերջո… իր ուղղորդվածությամբ չափազանց սթափեցնող:

Ստորև ներկայացնում ենք հատվածներ «Այրվող հորիզոններով քայլողը» վեպ-հուշագրությունից:

ԻՄ ՄՈՐԱՔՐՈՋ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Ես իմ ծննդյան թիվը չգիտեմ, մեր ժամանակներում ո՞ւմ էր պետք մեր ծնված օրն ու թիվը... Գիտեմ, որ 16 տարեկան աղջիկ էի, երբ հարս գնացի: Ո՞ր թիվ եմ՝ ինքներդ հաշվեցեք... Չորս տարվա հարս էի, երբ կոտորածը սկսվեց, թուրքերը թափեցին մեր վրա: Դա 1915 թվին էր, ուրեմն ծնված եմ 1895 թվականին և Եղեռնի օրերին 20 տարեկան եմ եղել:

Իմ ծնված գյուղը եղել է Գառնփեթակը: Հարս եմ գնացել Դերջանի Խարփին գյուղը՝ Փափուրճոնց տուն: Ամուսինս՝ Անդրանիկը, մշակ էր: Խարփին գյուղի կեսն արդեն թրքություն էր: Գյուղը Սև ջրի աջ ափին էր: Ձախ ափին Ծաղկարն էր, այնտեղ հայեր էին ապրում, ինչքան հիշում եմ թուրքեր չկային: Այդ կողմերում կային ուրիշ հայ գյուղեր՝ Խումլարը, Բագառիճը, Չխնըզը, Հողեկը... Շատ կային, չեմ հիշում...

Բոլորի մեջ էլ թուրքերն սկսել էին մտնել ու տիրանալ ամեն ինչին: Աջ ափին գտնվում էին նաև Կոթերը, Փրիչը, Մանձը, Բուլքը... Էլի կային՝ Ագարակը, Թորոսները, Ղարաղուլաղը, ձեր գյուղը՝ Խնզրրն...

Քրդեր էլ շատ կային: Հայի գյուղերում էին ապրում, իրենց գոմերում էին ապրում: Ձեր գյուղում ու մեր գյուղում քրդերի հետ խառն էինք ապրում... Դերջանի Ղայմախում էր գտնվում թուրք զաբդիաների և մյուդյուրների ղեկավարը: Կառավարությունը նստում էր Մամախաթունում: Գյադա - քաղաք էր համարվում՝ Մամախաթունի ջրի ափին էր: Կոթերի միակ կամրջով էին անցնում, գնում Մամախաթուն, Էրզրում: Հին ջրի վրա ոչ մի ուրիշ կամուրջ չկար, ոչ էլ Մամախաթունի ջրի վրա կար:

Մեր գյուղից իմ հիշողության մեջ մնացել է հայրս՝ Ավետիքը, որ քահանա էր: Մեզնից առաջ էլ է ջարդ եղել, այսինքն թուրքերը միշտ էլ ջարդել, թալանել են հայերին, փախցրել ու տեղահան են արել: Քրդերն էլ օգտվել են, կողոպտել ու սպանել: Հայը իրավունք չուներ զինվելու՝ զենք, դանակ, դաշույն կրելու. եթե բռնեին, տունը կրակի կտային, կասեին ֆիդայի ես...

Իմ ծնողական ազգանունը Խոսրովյան է: Այդ եղել է տատիկիս անունով: Նրանց Մելվի են անվանել: Ինձ անվանակոչել են Խոսրովանդուխտ, բայց ասել են Խոսրով: Քո մայրը՝ Բահարը, ինձ հետ մորով մեկ է, իմ մեծ քույրն է: Մեր մայրը՝ Մարիամը, իր հետ է բերել նրան փոքր տարիքում, երբ ամուսնացել է հորս հետ: Ես հետո եմ ծնվել:

Քո մոր հայրը բագառիճեցի Բեկոյի թոռն է եղել: Քո տատիկի անունը Մարիամ էր: Մորդ հայրը խելոք մարդ չի եղել, խելապակաս է եղել, բայց Բեկոյենց տոհմը շատ հարուստ է եղել, նշանավոր: Հորից հետո այդ խելապակասը եղած-չեղածը ծախծխել է, միակ ժառանգորդն է եղել: Միշտ կռիվ է արել, տան գույքը ծախել է, լազերից (Տրապիզոնի) միրգ է առել ու ծախել, սննկացել ու մահացել...

Մայրդ՝ Բահարը, Բագառիճի դպրոցն է գնացել, լավ գրել-կարդալ է սովորել: Խելառ հոր հետ ոչ մի կապ չի ունեցել: Ես փոքր էի՝ 3-4 տարեկան, որ մորդ հարս տարին, Խնզրի հորդ՝ Հովակի համար: Իմ կարծիքով նա իրեն Կոթերի կամրջից ջուրը գցած կլինի: Մեր մայրը ունեցել է 3 տղա: Մեր եղբայրներից մեծի անունը Թորոս էր, նրան սպանեցին Մանձում: Կինը, տեսնելով ամուսնու մորթվելը, քարշ է տալիս ամուսնու դիակը, և իր ու երեխաների հետ իրեն նետում է ջուրը: Ջրասույզ են լինում: Գազան ջարդարարները ջուրն ընկած կնոջ վրա էլ կրակում են: Միջնեկ եղբորս՝ Փիլոսին, բռնում են դիերի մեջ: Հանում են ու նախ հարցնում են՝ ում տղան ես... Պատասխանում է՝ Ավետիքի: «Ուխա՛յ»,- ծիծաղում են և սպանում: Փոքր եղբորս՝ Անդրանիկին, մորս փեշի տակից են գտնում և սվինի վրա են հանում, շպրտում քարերի վրա: Մայրս գժվում է, էլ չգիտեմ ինչ է լինում: Հայրս՝ Ավետիքը, ավելի շուտ էր գնացել, կարծեմ Վանի պաշտպանության կռիվներին մասնակցելու:

Դե լսեք, պատմեմ տեսածս ու քաշածս, ոչ մի բան չեմ մոռացել...

1915 թվի ջարդը մեզ մոտ այսպես սկսվեց. մի օր ճաշի ժամանակ Համբարձում աղան եկավ (այդ մարդը Մամախաթունում ինչ-որ պաշտոն ուներ) և ասաց. «Ժողովուրդ, կառավարության շները պահանջում են, որ մենք՝ բոլոր հայերս, կամ կրոնափոխվենք, թուրքանանք, կամ էլ իրենք պիտի կոտորեն մեզ»: Մեր գյուղը պատասխանեց, որ իրենց հայությունը հավիտյան է, չեն փոխվի, հայության հավատքով էլ կզոհվեն:

Իրիկնադեմին զորքը մտավ գյուղ, նրանց հետ էր նաև զինված խուժանը: Գյուղում կռվող, դիմադրող տղամարդիկ չկային, բոլորին տարել էին: Գյուղը խառնվեց իրար: Սկսեցին ջարդել, կոտորել, կողոպտել... Արու չթողեցին, մինչև վերջին մանուկը մորթեցին: Տարան կին, երեխա, աղջիկ՝ բոլորին բռնաբարեցին, հանեցին տներից, տները զավթեցին: Մենք մնացինք արյան ու ողբի մեջ: Մի մասին հաջողվեց մի կերպ գիշերել: Ես ընկա հարևան թուրքի տունը՝ Մեմեդ աղայի մոտ: Այդ գիշեր թուրքերը ինչ ուզեցան, արեցին, մնացածներին հավաքեցին, լցրին տագրոջս մեծ թոնրատան մեջ: Ոչ մեկին տանը չթողեցին, մեզ էլ տարին: Պիտի վառեին, ի՞նչ անենք, չգիտեինք: Ուրիշ տեղերից էլ հայեր բերեցին:

Առաջին գիշերը, երբ գյուղ մտան, սկսեցին կոտորել անխտիր: Գյուղի կանայք անմիջապես որոշեցին հավաքվել և գնալ Սև ջուր, բոլորը միասին մտնել ջուրն ու խեղդվել: Սև ջուրը առատ ջուր է, խորն է, մեր Դերջանի դաշտով է հոսում, առանց աղմուկի, լուռ վաշ-վուշով: Թուրք ջարդարարները մեր առաջը կտրեցին խանչալներով, ահավոր էր: Կանչեցին թե՝ ո՞ւր եք գնում: Մեզնից համարձակները դուրս եկան, ասին՝ «գաղթեցնում եք, գնում ենք լվացք անելու»... Խաբեցին: Լավ հիշում եմ՝ վազեցինք: Մեծ տարիքի

կնանիք առաջինը մտան ջուրը: Նրանց ետևից՝ բոլորը: Ջուրն ասես ակոսվեց, ետ գնաց, բոլորն իրար հրելով ընկան ալիքների մեջ: Հոսանքը տանում էր, արդեն դիակներ էին ջրի երես դուրս գալիս: Ինձ էլ քշեց ջուրը, գրկիս երեխան ճչում էր, չկարողացա դիմանալ, դուրս եկա ափ: Թուրքերը վրա հասան, դուրս բերին, տարան բանտարկեցին: Հետո հավաքեցին: Հաջորդ օրը տանում էին աշխատացնում, ինչ ցանկանում՝ անում էին:

Օրեր հետո մեզ՝ մնացածներիս, իրիցկնոջ հետ հավաքեցին, տարան: Իրիցկինը փորձեց դիմադրել, մորթեցին մեր առջև: Չգիտեմ՝ ի՞նչ որոշեցին, բայց մեզ հավաքեցին գյուղի մեջ ու սկսեցին ջոկել: Սիրուններին, լավերին ջոկեցին, տարան, մնացածներին քշեցին, տարան Վժժանի կողմը՝ Սև ջրի ափը, սկսեցին նորից կոտորել, բռնաբարել ու շպրտել ջուրը: Ես այդ պահին իմ երեխայի հետ կարողացա փախչել: Մտա արտերի մեջ, արտերն արդեն հասունանում էին: Հավաքվեցինք 4-5 կանանցով՝ մեր մանուկների հետ: Թաքնված մինչև լույս մնացինք: Տեսանք զորք է գալիս: Էրզնկայի զորքն էր, գնում էին կռվելու: Դրանք մեզ բռնեցին, տարան: Սկսեցին բռնաբարել, երեխաներին մորթել: Հրամանատարը եկավ: Աղաչեցինք, որ մեզ թողնեն, ես իմ երեխայի հետ մնացի ողջ, նրանց հետքով գնացի, հասա նորից մեր գյուղը: Ոչինչ չէր մնացել, գրավել էին: Մտա Մեմեդ աղայի տունը:

Մի քանի օրից նորից եկան, ողջ մնացածներին հավաքեցին տարան: Ես նորից փախա: Մեմեդ աղայի տանը ինձ հետ մի քանի կանայք էլ կային: Հաջորդ օրը Մեմեդ աղայի տնից փախանք: Իմ նպատակն էր գալ, հասնել հորանցս տուն՝ Գառնիթեթակ:

Կարծում էի, որ նրանք ողջ կլինեն: Չարչարվելով, թաքնվելով՝ հասա գյուղ, տեսա ոչ մեկը չկա: Ջարդել են, ավերել, թալանել՝ ամայություն է: Բնաջնջել են: Գտա իմ հարսին մի քրդի տան մեջ: Ես հիշում էի, որ իմ եղբայրը՝ Թորոսը, մեր տան գանձը պահել էր գոմի հատակի տակ: Հոն հոր էր փորել՝ լավ թանկ ապրանքները լցրել: Գնացի, որ հանեմ, տեսա՝ լրիվ հանել են, մորթված հայերի գլուխներ էին լցրել տեղը: Լաց լինելով փախա, գնացի, շատ աղաչեցի գյուղի Հասան աղային, որ ինձ թողնի իմ հորանց տանը մնամ: Սակայն նա չթողեց, ըսավ՝ հրաման կա, ոչ մի հայ չպետք է մնա կենդանի, ով մնում է, թուրք պիտի դառնա: Մի քանի օրից այդտեղ հավաքված մնացուկներին նորեն եկան հավաքեցին, քշեցին, տարան Մանձ գյուղը: Հավաքեցին մի թոնրատան մեջ: Մի թուրք կին եկավ, ջոկեց ինձ: Ձեռքիցս բռնեց և տարավ իրենց տուն, երեխան դեռ գիրկս էր: Այդ կինը ուներ մի եղբայր ու եղբոր տղա՝ մեծ հասակի: Ըսավ, որ ես պետք է անոր կինը ըլլամ, երեխային մորթեին պիտի՝ տղա էր: Հաջորդ օրը երեխայիս տարա, գցեցի Մանձի գետը, որ կարողանամ փախչել: Գիշերը վեր կացա, գաղտնի ընկա ճանապարհ, դեպի Անկջրի ուխտավայրը: Անկջրվա ուխտավայրը ամբողջ Դերջանի հավաքատեղին էր, Սուրբ էր, գիտեի ճանապարհը: Հասա, ծունկ չոքեցի, աղոթք արի, որ ինձ ազատի, թեև այլևս ո՞ւմ էր պետք: Հետո սարերով անցա, գնացի Սև ջուրը: Մտա սառը ջուրը, միտքս խեղդվելն էր: Ջուրը խորն էր, ես էլ ավելի խոր տեղերն ընկա, քշեց ինձ ափ հանեց, չխեղդվեցի: Լացեցի, ողբացի, հանգստացա: Գնացի Բագառիճ: Այդտեղ լսեցի, որ Անդրանիկը՝ ամուսինս, ողջ է: Քիչ մնաց ցնդեի, ուշաթափ եղա: Ամուսինս թուրք զորքի մեջ էր և գտնվում էր Հողեկում: Զորքում կային հայեր, որոնց աշխատացնում էին և արհեստավորներին օգտագործում: Բագառիճում կենտ-կենտ կնանիք էին, հավաքվել: Ամեն մեկը մի հույսով աշխատում էր ողջ մնալ: Աշխատող թույլ հայերին տեղնուտեղն

սպանում էին, հիվանդներին, թույլ ու հյուծվածներին չէին պահում, խփում էին, գցում փոսերի մեջ: Փախա Հողեկ և գնացի Սեմիդ աղայի մոտ: Նրա եղբոր միջոցով գտա ամուսնուս: Աստված իմ, այս ինչ ճակատագիր է: Եղբայրս չկա, տուն ու տեղս, գյուղս, ազգությունս չկան: Ես ու ինքն ենք: Ամուսինս ըսավ. «Պետք է միասին փախչենք»: Ես լաց եղա, ըսի. «Անդրանիկ, կբռնեն, մեզ կսպանեն»: Նա ասաց, որ ինքը ծանոթ է վժոնեբի քրդերին: Քրդերը կօգնեն մեզ: Այդպես ընկանք քրդերի մոտ: Սկզբում չվստահեցի, շատ վախեցա, որ կսպանեն մեզ:

Ամուսինս գնաց Գումակ: Իր հրամանատարը թուրք չի եղել, պահել է նրան: Հետո իմացա, որ մնացած հայերին՝ իմ ամուսնուս նման երիտասարդներին, հավաքել էին ու տարել: 30.000-ի չափ այդ վերջին հայերին մորթել, սպանել էին Սվազի կողմերում: Ես մնացի մենակ:

Հողեկում ամուսնուս այլևս չտեսա, հավանաբար Սվազի կողմեր տարվողների մեջ էր, մորթել էին: Հողեկից ես նորեն կարողացա գալ Մամախաթունի ջուրը և Սև ջուրը: Ինչպես հասա՝ չգիտեմ: Գիտեմ, որ հասա Փրիչ, միացա քրդերին: Ճանապարհ ընկա: Ձյուն-ձմեռ էր: Բոբիկ, սոված, տկլոր՝ հասա մինչև Չամուռ-Դարա: Այնտեղ գտա մորաքրոջս, ա՛յ բախտ: Իմ քուրջերը տվի մորքուրիս: Ես նրա շորերը հագա, որ ինձ չճանաչեն: Մորաքույրս քրդի տանն էր ապրում՝ ախոռում: Հետո մորաքույրս ինձ ճանապարհ դրեց դեպի Ագարակ: Այնտեղ հայ ազատվածներ պիտի լինեին: Քրդերը որոշ թվով կանանց ազատել էին իրենց համար: Ձմեռվա ցուրտ ժամանակն էր: Գնացի հասա Ագարակ, դա ձեր Զմո մամայենց հայրական գյուղն էր: Մնացել էին քրդերը միայն: Այնտեղ մի քրդի տան համար կանայք էին աշխատում: Ես աշխատեցի նրանց հետ: Քուրդը չոլախ էր, ոտից հաշմանդամ էր: Մնացի այնտեղ մինչև ռուսների հետ հայերն էլ եկան:

Առաջ հայերը հասան, ջարդին մասնակցողներին սպանեցին, մնացածներին, որոնք հայ չէին սպանել, ձեռք չտվեցին: Երբ ռուսներն ու հայերն եկան, բոլոր ողջ մնացածները գնացին իրենց գյուղերը:

Ա՛խ, հայի սև բախտ, այս հանգիստ շունչը երկար չտևեց... Ռուսները թողեցին, ետ գնացին առանց մի բան ասելու: Հայերն էլ չմիաբանվեցին: Թուրքերն օգտվեցին ճակատի քայքայումից, զորքի բացակայությունից, վրա տվին: Դիմադրող չկար: Մենք նորից ամեն ինչ թողինք թուրքերին ու քրդերին: Հազիվ սկսեցինք առանց ապրուստի փախչել Էրզրումի կողմը: Ես այդ ժամանակ մի հայի հետ, որ մեզ ազգական էր, արդեն ամուսնացել էի: Իմ մարդը մյուս տղամարդկանց հետ պաշտպանությանն էր մասնակցում: Մենք կարողացանք փախչել: Հակառակի նման քրդերը սկսեցին մեր ճանապարհները գտնել, հարձակվել տարբեր կողմերից: Այդ ժամանակ մեզ հասավ քաջ Մուրադը իր հայդուկների խմբով: Այդ հայ կտրիճներն եկան հասան Էրզնկայից: Էրզնկան թողել էին թուրքերին...

Սև ջուրն անցնելիս Փրիչի կռիվներում ամուսինս հերոսաբար զոհվեց, չկարողացան փրկել: Մնաց առանց թաղվելու: Հասանք Մամախաթուն, որտեղից էլ Մուրադի տղաների հերոսության շնորհիվ և դարաբաղցի տղաների օգնությամբ հասանք Էրզրում: Ցուրտ էր: Էրզրումում մեզ հասավ Զորավար Անդրանիկը: Նա խոսում էր, ասում էր. «Հայ ժողովուրդը թող չվախենա, մի հատ հայ էլ մնա, նորեն Հայաստանը կըլլա»: